ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք. Աշտարակ 2026թ. հունվարի 8 -ին, N 8 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԻԼԱԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ, ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 163-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասով և հիմք ընդունելով Մ. Հովհաննիսյանի 2026 թվականի հունվարի 5-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2023 թվականի փետրվարի 7-ից 2024 թվականի փետրվարի 7-ն ընկած ժամանակահատվածի համար՝ **2** աշխատանքային օր տևողությամբ և ամենամյա նվազագույն արձակուրդի մասը 2024 թվականի փետրվարի 7-ից 2025 թվականի փետրվարի 7-ն ընկած ժամանակահատվածի համար՝ **1** աշխատանքային օր տևողությամբ 2026 թվականի հունվարի 7-ից հունվարի 9-ը ներառյալ:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանի պարտականությունները ժամանակավորապես դնել մարզպետի տեղակալ Արմեն Գրիգորյանի վրա:
3. Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 1/8/2026 17:20:18 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ